«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Հարաբերյալ բառի տեղն ու դերը ստորադասական նախադասության մեջ

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց լեզու և գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Գայանե Մնացականյան

ՄԱՐԶ՝ Լոռի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Ալավերդու համար 10 հիմնական դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. Էմինյան

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..…….…3
1. ՀԱՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՌԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ.4
2. ՀԱՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ՀԵՏ……..…..11
3. ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ……...14
4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……...16
5. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը:Նախադասությունն իր տեսակներով և կառուցվածքով եղել և մնում է շարահյուսության ուսումնասիրության առանցքային առարկան: Նրա ուսումնասիրության առարկան են հանդիսանում նաև քերականական այն եղանակներն ու միջոցները , որոնց շնորհիվ ձևավորվում, ամբողջանում է մտքի այդ միավորը:

Հետազոտության նպատակը: Ներկայացնել հարաբերյալ բառերի գործածությունը ստորադասական նախաասությունների մեջ:

Հետազոտական խնդիրներն են՝

1. Բացահայտել հարաբերյալ բառի տեղն ու դերը ստորադասական նախադասության մեջ:
2. Ներկայացնել հարաբերյալ և հարաբերական բառերի զուգահեռների ստեղծման կարևոր պայմանները:
3. Ներկայացնել հարաբերյալ բառերի գործածությունը ստորաասական շաղկապների հետ:
4. Ներկայացնել հարաբերական բառերի գործածության հաճախականությունը:

Այս աշխատանքում փորձ է արվում հնարավորինս ամբողջականն ներկայացնելու հայերենի բարդ ստորադասական նախադասությունների մեջ կարևոր տեղ զբաղեցնող հարաբերյալ և հարաբերական բառերի տեղը, դերը, նշանակությունը:

ՀԱՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՌԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հարաբերյալ ու հարաբերական բառերով ստորադասական նախադասությունները հայերենի ստորադասության ամենահին ձևերից մեկն են:

Հարաբերյալ բառի երկակի ըմբռնում է նկատվում հայ քերականության մեջ: Մի դեպքում հարաբերյալ է համարվում գերադաս նախադասության այն գոյական անդամը , որի հետ հարաբերակցվում է կամ որի լրացումն է դառնում երկրորդական նախադասությունը : Օրինակ՝

Նրա լանջին կանգնած էին երեք պատանի, որոնք ջահերով լուսավորում էին եկողների ճանապարհը: Բեմին ամենից մոտիկ նստած էին երեխաները , որոնք շատ քիչ բանից են արդեն զարմանում : Երեկոյան, երբ մոտեցա տոմս վերցնելու , տեսա , որ դեղին թղթերի մոտ նստած է Օթելլոն , ակնոցն աչքերին:

Բերված օրինակներում հարաբերյալ բառեր են դիտվում պատանի , երեխաները, երեկոյան բառերը , որոնց լրացնում են երկրորդական նախադասությունները:

Մյուս կողմից՝ հարաբերյալ բառ են դիտվում այն ցուցական դերանունները, որոնք գերադաս նախադասության մեջ կատարում են ձևականորեն որևէ պաշտոն՝ լինելով ենթակա, ստորոգելիական վերադիր, պարագա և այլն: Այս ձևական անդամները նյութական բովանդակություն են ստանում միայն երկրորդական նախաասության միջոցով: Օրինակ՝

Բարխուդարը մեկն էր այն հզոր մելիքներից, որ հայոց անկախությունը վերականգնել էր կամենում՝չխնայելով իր ուժն ու զորքը: Ներսես ախպարն այնպես մոլորվել , այնպես հուսահատվել էր, որ ամեն բանը՝ ապրելը, կյանքն անգամ աչքից ընկել էր…: Որքան հաջող են գնում հրեայի գործերը, այնքան նա քիչ է քնում:

Այս նախադասությունների մեջ գերադաս նախադասության մեջ գործածված այն, այնպես և այնքան ցուցական դերանունները հարաբերական բառեր են, որոնք ձևական պաշտոն են ստանում, իսկ իրենց նյութական բովանդակությունը ստանում են ստորադաս նախադասության բովանդակությամբ:

Հարաբերյալ բառը միշտ գերադաս նախադասությանմեջ է լինում, իսկ հարաբերական բառը՝ երկրորդական: Քերականագիտության մեջ միշտ էլ նախապատվությունը տրվել է հարաբերական բառերին, գտնելով որ ելակետային դեր ունեն հարաբերական բառերը,

որոնց համապատասխան գերադաս նախադասության մեջ գործածվում են հարաբերյալ բառերը: Սակայն իրականում պատկերը միշտ հակառակն է: Ստորադասական կապակցություններում ելակետը միշտ էլ հարաբերյալ բառն է, որը նախ ցույց է տալիս, որ գերադաս նախադասությանը հաջորդելու է երկրորդական նախադասություն, այլ կերպ ասած՝ հարաբերյալ բառերը ստեղծում են պարտադիր կառույցի ստորադասական կապակցություններ: օրինակ՝

Մի՞թե սա այն Անտոնիոն չէ, որին ճանաչում է ամեն մի վենեցիացի ...: Նա այնպես էր նստել երկնագույն ձիուն, որ ասես բուսած լիներ թամբից:

Ինչպես տեսնում ենք, այս կառույցներում այն և այնպես հարաբերյալ բառերը ցոիյց են տալիս, որ նախադասությունը պիտի շարունակվի, այլապես այն թերի կմնա:

Երկրորդ՝ հարաբերյալ բառը ենթադրել է տալիս երկրորդական նախադասության բնույթը, այսպես ասած՝ երկրորդական նախադասության բնույթի ցուցիչ է: Օրինակ՝

Ես երկար նայում էի փողոցին, նայում էի այն քարերին, որոնց քսվել էին իմ ոտքերը, և տխուր էի: Շատ ափսոսացի, որ նրան չեմ ասել այն բառերը, որ նրանն էին, բայց ուշ էր արդեն: Իմացեք խստագույն կպատժվի նա, ով հարևանի մի ծառին անգամ դիպչի: …Այլ միայն հանկարծ բերանը բաց արեց, ներս ծծեց օդը մի տարօրինակ հնքով, անյպես, ինչպես ջրից հանած ձուկը:

Այս կապակցություններում առաջին երկու նախադասությունների մեջ գործածված այն հարաբերյալը, կատարելով ձևական որոշրի պաշտոն, թելադրում է, որ երկրորդական նախադասությունը ըստ բնույթի պիտի որոշիչ լինի, հաջորդ նախադասության մեջ ենթակայի պաշտոնով նա հարաբերյալը հուշում է երկրորդական նախադասության ենթակա լինելը, իսկ վերջին նախադասության այնպես հարաբերյալը, որ ձևի պարագա է, ցույց է տալիս, որ երկրորդական նախադասությունը ևս ձևի պարագայի պաշտոն պիտի կատարի:

Երրորդ՝ հարաբերյալ բառը թելադրում է երկրորդական նախադասության մեջ համապատասխան հարաբերական բառ: Այսպես չափի հարաբերություն արտահայտող հարաբերյալը կպահանջի նույն իմաստն ունեցող հարաբերական բառ (այնքան-որքան, այնքան-ինչքան, այնչափ-որչափ), իսկ ձևի գաղափար

-3-

արտահայտող հարաբերյալին համապատասխանում է նույն գաղափարն արտահայտող հարաբերական բառ (այնպես-ինչպես, այնպես-որպես): Օրինակ՝

…Ոչ մի ազգ այնքան շուտ չի հաշտվում ճակատագրի հարվածների հետ, որքան ռուսը: Այնտեղ երկիրն այնքան դաժան ու մերկ չէ, ինչքան բուն Ռուսիայում անվերջ անապատներում: Լավ է, համարյա այնպես, ինչպես երազում էինք, հիշու՞մ ես: Հետո ամեն ինչ եղավ այնպես, ինչպես լինում է :

Հարաբերյալ ու հարաբերական բառերի զուգահեռների ստեղծման համար նշանակություն ունի անձ և իրի քերականական կարգը: Այնպես անձի նշանակությամբ հարաբերություններ դրսևորելու դեպքում գերադաս և երկրորդական նախադասությունները միանում են հարաբերյալ և հարաբերական բառերի հատուկ զուգահեռներով. նա- ով, նա-որ, նրան-ով, նրանք-ում և այլն: Օրինակ՝

Բայց ինչու այդ ասել նրան, որ այնպես լուսավոր աչքերով իրեն էր նայում: Սերն էլ է այցի գալիս և նրան, ում կսիրեն, և նրան, ում չեն սիրի երբեք, երբեք: Վերջապես հայտնվեց նա, ով այնքան ժամանակ անհետ կորած էր համարվում:

Իսկ իրի առման դեպքում ստեղծվում են հետևյալ զուգահեռները. այն-որ, այն-ինչ և այլն: Օրինակ՝

Այսինքն այն, ինչ մարդուն մի առանձնապես հարկավոր չէ: Կասկածի ու թերահավատության առաջին տողն էր այն, որ վայրկենապես լուսավորեց նրանց խավար միտքը: Այն, ինչ զլացել էր Աստված, տալիս էին մարիկ:

Բարդ ստորադասական նախադասության մեջ հարաբերյալ ու հարաբերական բառերը սովորաբար թվով համաձայնում են . եզակի թվով հարաբերյալի հետ գործածվում է եզակի հարաբերական , իսկ հոգնակի թվով հարաբերյալի հետ հոգնակի հարաբերական: Օրինակ՝

Արդյոք իմաստուն հոգին չի՞ միայն նա
Որ թե հարթըմնի և թե երազում
Ապրում է, տեսնում, զգում ու հուզվում…

Ոչնչացրեք նրան, ով կփորձի անմիաբանության ախտով վարակել ձեզ: Ճանապարհին երևում էին խմբեր, որոնք շտապում էին Մելիք Բարխուդարի ամրոցը:

Ինչպես տեսնում ենք, վերջին նախադասության մեջ ձևական անդամ չկա, հարաբերյալ է այն անդամը, որին լրացնում է երկրորդական նախադասությունը:

Երբ եզակի թվով հարաբերյալի հետ գործածվում է հոգնակի թվով հարաբերական, բացառության երևույթ է, խորթ անընդունելի մեր լեզվի համար:

Օրինակ՝

Ներս մտավ խմբի մի մասը, որոնք մասնակցել էին երեկվա հավաքին: Մեզ հետ եկավ հյուրերի մոտ կեսը, որոնք անպայման ուզում էին տեսնել հնամյան այդ քաղաքը:

Այժմ տեսնենք, թե երբ է հարաբերականը դրվում հոգնակի թվով: Նախ, հարաբերական բառը հոգնակի թվով է դրվում, երբ եզակի թվով հարաբերյալը ունի մեկից բարձր թվական անունով որոշիչ: Օրինակ՝

Առաջ եկան երկու առույգ երիտասարդ, որոնց տանուտերը կարգադրեց քանդել ցանկապատի ծուռ տեղերը: Եկան երկու հոգի , որոնք հրացանները դրել էին թևերի տակ՝ հանկարծ սկսած անձրևի պատճառով : Նրանք իրենց հետ տանում էին տասներկու սև նժույգ, որոնց թամբին հարմարեցրել էին հանգուցյալի զգեստները, զենքերը, վահանը, զրահը…:

Հարաբերական բառը գործածվում է հոգնակի թվով նաև այն ժամանակ, երբ գերադաս նախադասության մեջ հարաբերյալները բազմակի են: Օրինակ՝

Ապա վեճն անցավ Մինասին ու Թևոսին, որոնք արեն սպիտակախառն մորուքով, հիսունն անց մարդիկ էին, հարսների ու թոռների տեր: Դավադիրները Մելիք Մուսին են ու Տաթևի Գարեգին վարդապետը, որոնք կամեցել են հորս ու եղբորս դավադրակից անել իրենց: Բայց չի հաջողվել:

Արի հայերենում քիչ դեպքեր չեն, երբ հոգնակի թվով հարաբերյալի հետ գործածվում է եզակի թվով հարաբերական բառեր: Դա կատարվում է հատկապես այն դեպքում, երբ հաղորդակցման ընթացքում խոսողը ուշադրությունը բևեռում է ոչ թե հարաբերյալ ու հարաբերական բառերի թվային համաձայնեցման, այլերկրորդական նախադասությամբ արտահայտված մտքի վրա: Այնուամենայնիվ նախադասության անդամների համաձայնությունը ինչ-որ չափով պահպանվում է: Չնայած հարաբերական բառը գործածվում է եզակի թվով, այնուամենայնիվ երկրորդական նախադասության ստորոգյալը դրվում է հոգնակի թվով: Օրինակ՝

Տեր մեր, լուսավորիր նահատակների հոգիները, որ ըմկան Արաքսի ափին: Ուզեցի պատկերացնել տղային, նայել նրա աչքերին, որ չէի տեսել: Բայց նրա աչքերի

տխրությու՞նը, մատները, որ դողում էին…: Նրանց մեջ կլինեն այնպիսինները, որ երևի սովորական հանդիսատես չեն եղել 1915 թվականին

Հարաբերյալի և հարաբերականի թվային կարգը նույնպես իր դերն ունի զուգորդումների ստեղծման համար (նա-ով, նա-որ, նրանք-ովքեր և այլն): Օրինակ՝

Ով իր եղբոր վրա զենք է բարձրացնում, նա չպիտի վայելի արևի լույսը: Ով մոռանում է ճիպոտների հարվածները, նա իր գլուխը հոժարակամ դնում է սրի տակ : Ապա դաս լինի թող բոլոր նրանց, ովքեր սրտում քեն ունեն ժողովրդի դեմ:

Ահա և այսպես ստեղծվում է հարաբերյալ ու հարաբերական բառերի իմաստային ու քերականական զուգահեռներ, նա-ով, նա-որ, այն-ինչ, այն-որ, այնպես-ինչպես, նույնքան-ինչքան, այնչափ-ինչչափ, նրանք-ովքեր, նրանք-որոնք, նույնպես –ինչպես, այնպես-որպես և այլն:

Երբեմն հարաբերյալ բառի պաշտոն կարող է կատարել մի անորոշ դերանուն, որը փաստորեն հապավման ճանապարհով է ստացվում: Ըստ էության դա մի այնպիսի բառակապակցության կրճատ ձևն է , որ ստացվում է հաղորդակցման ժամանակ այնպիսի ցուցական դերանվան զեղչմամբ, և այսպիսով պահպանվում է մի անորոշ դերանունը, իբրև հարաբերյալ: Օրինակ՝

… Հազվագյուտ գեղեցկության փայտաշեն մի եկեղեցի, որ ճիշտ է, հարյուր կիլոմետրի վրա է, բայց գումարած այ ամենին, եկեղեցում կա Անդրեյ Ռուբլյովի նկարած երեք սրբապատկեր: Զորքի առջև ծեծել տվեց իր հորը, մի մարդու, որն իր կյանքը անց էր կացրել ձիու թամբին, որի մատները կոշտուկներով էին պատված՝ անվերջ թուր բռնելուց:

Հարաբերյալ բառերը երբեմն կարող են գործածվել որոշ առարկաների , հատկանիշների, հանգամանքների ամփոփման նպատակով: Այսպիսի դեպքերում գործածվում են այն ամենը, այն բոլորը և նման հարաբերյալ բառեր: Օրինակ՝

Երբ հիմա հեռու հեռվից ետ եմ նայում այդ օրերին-բաժանքի կռիվները համարյա սքողում են այն բոլորը, ինչ լավ էր ու գեղեցիկ իմ վաղ մանկության մեջ.-մեր խաղերը ծառերի տակ, ձյուների վրա մեծերի հեքիաթները գարնան երեկոներին, կամ ձմեռը՝ վառարանի մոտ, թափառական կույր աշուղների երգն ու նվագը թառի վրա, ար այնքան մարդ, կին, երեխա էին հավաքում իրենց շուրջը և այնպես թունդ էին հանում իմ փոքր սիրտը:

Ստորադասական կապակցության մեջ երբեմն այնքան կարևորություն է տրվում հարաբերյալ բառերին, որ նրանք հնչերանգով զատվում են նախադասության մյուս անդամներից, գրավոր խոսքի մեջ տրոհումը կատարվում է ստորակետով: Օրինակ՝

Նա նայեց Գոհարին, նայեց կարոտով, ափսոսանքով, այնպես, ինչպես նայում են ամենաթանկագին հարազատին հավիտյան կորցնելիս: Իջա ձորը, այնտեղ , ուր Սրապ քեռու ձիերն են:

Ինճպես նշեցինք, հարաբերյալ բառերը երկրորական նախադասության բնույթի ցուցիչ են, սակայն նրանք կարող են գործածվել նաև լոկ <<եղանակավորման>>
դերով, ուստինման դեպքերում չպիտի ընկնել թյուրիմացության մեջ, քանի որ հարաբերյալ բառով որոշել երկրորդական նախադասության բնույթը միշտ չի կարելի: Հարաբերյալ բառերի նման կիրառությունը պահանջում է գրական որոշակի վարպետություն, նկատվում է, որ շատ հաճախ հարաբերյալ բառերի նման կիրառությունը, այսինքն՝ նրա գործածությունը ոճավորման նպատակով, հասցնում է խոսքի անորոշության: Դիտվել են հարաբերյալի կիրառության հետևյալ դեպքերը.

ա/ Այս ձևով այնպես հարաբերյալը կապակցում է ենթակա երկրդորական նախադասության: Օրինակ՝

Նրան այնպես էր թվում, թե ամենքը, երևի չեն կարողանում մի բան անել, իրեն են հարցնում, իսկ մինչ այդ նրան այնպես էր թվում, թե ինքը երազի մեջ է: Մինչ այդ նրան այնպես էր թվում, թե Սաթոյին տանում են ժամանակավորապես…

Ինճպես տեսնում ենք, այս նախադասությունների մեջ երկրորդական նախադասությունը ոչ թե ձևի պարագա է, որը թելադրում է այնպես հարաբերյալի կիրառության արտաքին ձևը, այլ ենթակա երկրորական նախաասություն է, քանի որ գործածված է ոճական նպատակներով՝ շեշտելով բայ-ստորոգյալի թեական, ոչ ռեալ նշանակությունը:

բ/ Այսպես հարաբերյալ բառը ոճական կիրառությամբ կապակցում է նաև ուղիղ խնդիր երկրորական նախադասություններ: Օրինակ՝

Էսպես նա պատմեց զոռ տալով չիբխին.

-Էս գիշեր, կեսը կըլներ գիշերվա,

Դեռ չէի կըպցրել աչքըս տեղի մեջ…

Խուլ որոտալով էսպես հարցրեց.

- Ի՞նչ կա քաղաքում , դե պատմիր տեսնեմ…

- Վեր կաց, բանաստեղծ, կանչում է էսպես,

Վեր կաց, ներշընչվիր, դուրս արի հանդես…

գ/ Շատ հազվադեպ կապակցվում են այս ձևով նաև միջոցի անուղղակի խնդիր երկրորական նախաասություններ : Օրինակներ չգտնելու պատճառով բերում ենք Բ. Վերդյանի բերակ օրինակը:

Բայց մենք ընկերներով այդ հանգանմանքը բացատրում ենք անպես, որ նրանք հավանորեն վախեցել են մեզնից:

դ/ Չափի ու քանակի պարագա երկրորդական նախադասություններն էլ ունեն կապակցման այս ձևը: Օրինակ՝

Այս միտքն այնպես վախեցրեց խեղճ կնոջը, որ նա կանգնած տեղը դողաց : Բարխուդարի աչքերն այնպես շլացան, որ ասես հիմա կկուրանա թանկագին քարերի փայլից: Ձայնն այնպես էր կտրվել , որ ասես երբեք չէր վերականգնվելու :

Արդեն պարզ է, որ արդի հայերենի ստորադասական կապակցություններում խոշոր նշանակություն ունեն հարաբերյալ բառերը: Սակայն այլ է պատկերը գրաբարում : Գրաբարում նրանք այնքան էլ էական նշանակություն չունեին և կարող էին նաև չկիրառվել ստորադասական կապակցություն ստեղծելու ժամանակ: Երկրորդական նախադասությունը կապակցվում է հարաբերական բառով, որին գլխավոր նախադասության մեջ կարող էր համապատասխանել հարաբերյալ բառ, իսկ շատ հաճախ հարաբերյալը չի լինում, որին կարող է փոխարինել հարաբերակցվող բառի վերջում դրված հողը: Օրինակ՝

Ի վեր առեալ զսուսերն, զոր ընդ մէջն ունէր: Մեծարէր զամենայն աւուրս հաշտութեան և խաղաղութեանն, որ մէջ նոա էր: Իսկ զբլուրն, ուր քաջամարտկօքն անկաւ Բել՝ անուանեաց Հայկ գերեզմանս, որ այժմ ասին գերեզմանկք:

Սակայն գրաբարում ևս ստորադասական կապակցություններ ստեղծվում են հարաբերյալ հարաբերական բառերին միջոցով: Օրինակ՝

Զի թե արդարև արժանի զովութեան այնք ի թագաւորաց իցեն, որք գրով և պատմութեամբ զիրեանցն հաստատել կարգեցին զժամանակս: Եվ բազում անգամ մարտնչէր ընդ այնոսիկ՝ որ ոչ ընդ նովին օրինք մտածէին: Զի բազում այն են, զոր ոչ գիտեմ, ան թէ գիտցիմ:

Արևմտահայ գրական լեզուն ժառանգել է գրաբարի քերականության շատ օրինաչափություններ: Ստորադասական կապակցություններ ստեղծելիս էլ, հետևելով գրաբարյան քերականությանը , շատ հազվադեպ է օգտագործում հարաբերյալ բառեր, միայն հարաբերական բառերն են հանդես գալիս երկրորդական նախադասության մեջ: Օրինակ՝

Առողջ ու կայտառ աղջիկ մը, որ Ռաֆայել կարդացեր էր և դալուկ ու նիհար կազմվածքի մը կը տէնչար, թոքախտի հյուծումն է, ըսավ: Ասոր հետ մեկտեղ, երբեք չէին պակսեր անոր տունեն, անոր երեկույթներենմ ուր էն աղվոր , էն զվարթ, էն նրբամիտ ընկերությունը գտնելուն պահով էին: Եվ բռնելով ձեռքս, ստիպելով զիս որ քովը նստիմ, երբ ես մեկնելու կը պատրաստվեի արդեն, շարունակեց:

… Քայլ մը ավել մոտենալու համար այդ դեմի դրան, ուրկե հազիվ տասը քայլ կը բաժներ զիրենք:

Հարաբերյալ բառերի համեմատաբար հարուստ կիրառություն ենք հանդիպում որոշիչ երկրորդական նախադասությունների կապակցման ժամանակ: Օրինակ՝

…Ըսավ ինձի, ճիշտ այն վայրկյանին, որ գուցէ պատվավոր, բայց անհավատարիմ եղած էր իրոք: Ամառվան այն ոսկեհուռ ու սարսըռացող գիշերներն մեկն էր , որուն մեջ մարերը և իրերը կը շփոթվին…: Իբրև թե հասկնալ ուզեր թե արդյոք միևնույն ա՞նձն էի ես, որուն այնքան վստահություն ցույց տվեր էր:

Ի հակադրություն որոշիչ երկրորդական նախադասության , ձևի, չափի ու քանակի պարագա երկրորդական նախադասությունները կապակցելու դեպքում գլխավոր նախադասության մեջ համարյա թե չեն գործածվում հարաբերյալ բառեր:

ՀԱՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ՀԵՏ

Հարաբերյալ բառերը որոշ ստորաասական կապակցություններում գործածվում են ոչ թե հարաբերական բառերի, այլ ստորադասական շաղկապների հետ: Հարաբերյալ բառերով և ստորադասական շաղկապներով ստորաասական կապակցություններ են ստեղծվում հետևյալ դեպքերում .

ա/. Ենթակա երկրորդական նախադասությունը իրի առման դեպքում կարող է գլխավոր նախադասությանը միանալ որ ստորադասական շաղկապով, իսկ գլխավոր նախադասության մեջ դրվում է այն հարաբերյալ բառը : Օրինակ՝

Մի՞թե քիչ է այն, որ ես նրա սիրուն փակվել եմ այս մռայլ ամրոցում: Չի օգնում և այն, որ ամառները … ունեցած երկու սենյակները տալիս են քրեհով :

բ/. Գերադաս նախադասության մեջ գործածվում են այն, նրանից, նրա համար հարաբերյալ բառերը, իսկ ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասությունը կապակցվում է գլխավորի հետ որ, թե ստորադասական շաղկապներով: Օրինակ՝

Դա անշուշտ նրանից է, որ Գոհարի պես կին ունի: Բայց գլխավորն այն է, որ մաշկեղենի առևտուրի մեջ մրցակից չուներ: Ուրեմն մահն այն է, որ մարդուն, երեխային պարանած տեղավորում են ագաղի մեջ… :

գ/. Երբ որոշիչ երկրորդական նախադասությունը ցույց է տալիս այն հետևանքը, որը բխում է գերադաս նախադասության որոշյալի հատկանիշից, գերադաս բաղադրիչում գործածվում են այնպիսի, այն և նման հարաբերյալ բառեր, իսկ երկրորդական նախադասությունը կապակցվում է որ ստորադասական շաղկապով: Օրինակ՝

Նա երեխա չէ և այնպիսի կամք ունի, որ միանգամայն ազատ կարող է տնօրինել իր սեփական բախտը: Պարսիկ խաներն այնպիսի ջարդ կերան, որ այլևս կմոռանան Հայոց աշխարհի ճանապարհը: Թվաց, թե ինքն այնպիսի ուժ ունի, որ հիմա բոլոր մելիքներին կարող է ջարդել:

դ/. Երբ որոշիչ երկրորդական նախադասությունը ցոիյց է տալիս վերաբերություն և լրացնում է գերադաս նախադասության մեջ բայանուն գոյականի, ապա գերաաս նախադասության մեջ դրվում է այն հարաբերյալը, իսկ բաղադրիչների կապակցումը կատարվում է թե ստորաասական շաղկապի միջոցով: Օրինակ՝

Զորապետների այն հարցին, թե ինչու չեն իրենք մեկնում Ագուլիս՝ Բեկի մոտ, նա պատասխանել էր…:

ե/. Երբ հանգման անուղղակի խնդիրը կապակցելիս զգալի է հանգող առարկայի նյութական նշանակությունը, գերադաս նախադասության մեջ գործածվում են նա, այն բանին հարաբերյալները, իսկ երկրորդական նախաասությունը կապակցվում է որ ստորադասական շաղկապով: Օրինակ՝

Մենք պետք է հասնենք այն բանին, որ գերազանցենք ֆակուլտետի մնացած կուրսերին:

զ/. Միջոցի անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունները կապակցվելիս գերադաս նախադասության մեջ գործածվում է նա հարաբերյալը՝ գործիական հոլովո, իսկ ստորաաս բաղադրիչը միանում է թե, որ ստորաասական շաղկապներով: Օրինակ՝

Թվում էր, նրանով էր հպարտանում, որ իր մեջքին կրում էր հայոց աշխարհի պարծանքը : Մխիթարվում էին նրանով, որ թշնամին դեռևս չի մոտեցել իրենց գյուղին:

է/. Հետևանքի ձևի պարագա երկրորդական նախադասությունները գերադաս նախադասության մեջ համապատասխանում է այնպես հարաբերյալը, իսկ երկրորդական նախադասությունը կապվում է որ ստորադասական շաղկապով:

Օրինակ՝

Նա այնպես էր նստել երկնագույն ձիուն, որ ասես բուսած լիներ թամբից: Ամուսինն այնպես նայեց նրան, որ ամենաարի սիրտն անգամ ահ կընկներ: Նա աննկատելի ցնցվեց ու այնպես նայեց նրանց , որ ասես առաջին անգամ էր տեսնում:

Ինչպես տեսնում ենք, որ շաղկապի հետ գործածվում է ասես շաղկապական բառը, որը ընդգծում է հետևանքի ենթադրական լինելու հավանականության գաղափարը:

ը/. Հետևանքի երանգով չափ ու քանակի պարագա երկրորդական նախադասությունների գերադաս նախադասության մեջ համապատասխանում են այնքան, այնչափ հարաբերյալ բառերը, իսկ բաղադրիչների կապակցումը կատարվում է որ ստորադասական շաղկապով: Օրինակ՝

Քահանաների մորուքները փետել են, այնքան գանահարել, որ վրաները այլևս միս չի մնացել: Էնքան ծեծել ես, որ քիչա մնում մեռնի: Իսկապես մարթան այնքան նվաղել էր, որ թույլ հառաչանքի հետ հազիվ էին լսվում նրա բերնից դուրս թռչող խոսքերը:

թ/. Երբ հատկանիշի աստիճան արտահայտող երկրորդական նախադասություններն արտահայտում են ձևի, չափ ու քանակի հետևանքային հարաբերություն, երաաս նախադասության մեջ գործածվում են այնպես, այնքան հարաբերյալ բառերը, որոնց համապատասխան երկրորդական նախադասությունը միանում է որ ստորադասական շաղկապով: Օրինակ՝

Նրա ճիչն այնքան սարսափելի էր, որ ծերունի հայրը համարյա թե երիտասարդական կորովով վեր թռավ տեղից և ներս ընկավ: Այնքան մեղմանուշ, այնքան դյութիչ էր նվագած եղանակը, որ Ջուլետտան կարծում էր, թե իր սրտի լարերի վրա են նվագում: Այնպես խոր

էր շնչում, որ կրծքի զարդերը խշշում էին…: Իսկ հիմա նա նստած է իր կողքին՝ այնպես հասարակ ու առօրյա, որ կարելի է մտածել, թե նրանք քիչ հետո միասին են թռչելու :

ժ/. Հարաբերյալ բառը գործածվում է ստորադասական շաղկապի հետ նաև այն դեպքում, երբ երկրորդական նախաասությունը, կապի խնդիր լինելով, գերադաս նախաասության մեջ ձևական կապի խնդրին փոխարինում է և կապի հետ դառնում չափի, պատճառի, նպատակի պարագա և վերաբերության անուղղակի խնդիր. Ըստ այդմ գերաաս նախադասության մեջ լինում են այն ժամանակ, այն աստիճան, այն պատճառով, նրա համար, այն մասին և նման ձևական անդամներ, որտեղ ընդգրկված են հարաբերյալ բառերը: Օրինակ՝

Միայն մայրս չէր հավատում, բայց ոչ թե նրա համար, որ չգիտեր բժշկի ասածը…

Բառեր չկային ոչ թե նրա համար, որ շատ էին բառերը, այլ պարզապես բառեր չկային: Հետո նրանք խոսեցին այն մասին, որ ցերեկները քաղաքում շնչել անգամ հնարավոր չէ, իսկ գիշերները զով է, հաճելի: Հենց առաջին գյուղում մի տանուտերի կախեց այն պատճառով , որ սա փորձել էր մի այրի հարսի մոլորեցնել: Անանն այն աստիճան սովորել էր այդպիսի անառակ անեծքներ, որ մինչև անգամ չնայեց սկեսոր կողմը:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հարաբերական բառերի միջոցով բարդ ստորադասական նախադասությունների բաղադրիչները դրսևորում են բազմազան հարաբերություններ. Այդ հարաբերություններն արտահայտվում են տարբեր հարաբերական բառերով կամ նույն հարաբերական բառի տարբեր կիրառություններով: Ընդ որում այս կիրառությունները ունեն տարբեր հաճախականություն՝ կախված հարաբերական բառի պրոդուկտիվությունից, ինչպես նաև հեղինակի անհատական հակումներից ու ստեղծագործության ժանրից:

Այսպես հարաբերական բառերի գործածության հաճախականությունը որոշելու նպատակով հաշվառել են տարբեր հարաբերական բառերի կիրառությունները Վ.

Պետրոսյանի << Ապրած և չապրած տարիներ>> ու Ս.Խանզադյանի << Մխիթար սպարապետ>> ստեղծագործություններում՝ նկատի ունենալով թե 1000 նախադասության մեջ քանի երկրորդական նախաասություն է կապվում գլխավորին հարաբերական բառով:

ստեղծա-գործու-թյուն	նա-խադա-սությունների ընդհա-նուր թիվը	2-րդա-կան նախա-դասու-թյուն-ների թիվը	որ	երբ	ինչ-պես	որ-տեղ	որ-քան	ինչ	ով	Ուր
ՎՊԱԶՏ	1000	151	85	44	6	5	1	3	2	-
ՍԽՄՄ	1000	61	38	16	-	-	3	1	2	1

Ինչպես տեսնում ենք , Վ Պետրոսյանի մոտ ավելի շատ են հարաբերական բառով կապակցվող երկրորդական նախադասությունները, քան Ս.Խանզադյանի : դա հետևանք է նախ գրողի անհատական մոտեցման: << Մխիթար սպարապետը >> պատմավեպ է, և, կարծես այնտեղ անհամեմատ շատ պիտի լինեն բարդ նախադասությունները , բայց ընդհակառակն, գերիշխող են պարզ նախադասությունները: Համասական կապակցությունների համեմատությամբ անհամեմատ քիչ են ստորադասական կապակցությունները: Իսկ << Ապրած և չապրած տարիները>> խոհափիլիսոփայական ստեղծագործությունների ժողովածու է, որտեղ բավականին շատ են բարդ նախաասությունները:

Աղյուսակից երևում է, որ հարաբերական բառերից ամենաշատ գործածվել են, որ և երբ հարաբերական բառերը, որը բխում է նրանց գործածության բազմազանությունից: Անհամեմատ քիչ են ինչպես, որտեղ, որքան, ինչ, ով, ուր հարաբերական բառերովվ ստեղծվող ստորադասական կապակցությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայերենի ստորադասական նախադասություններ ստեղծելու հանրային միջոց են հարաբերյալ և հարաբերական բառերը: Հարաբերյալ բառը միշտ էլ դրվում է գերադաս նախադասության մեջ: Հարաբերյալ բառեր են դառնում հիմնականում ցուցական դերանունները, որոշ թվով որոշյալ դերանուններ և մի անորոշ դերանունը: Հարաբերական բառը նույն հարաբերական դերանունն է, որը սովորաբար լինում է երկրորդական նախադասության կազմում և դրված է լինում նրա եզրում:

Հարաբերայալ և հարաբերական բառերը կազմում են իմաստային ու քերականական զուգահեռներ և ստորադասական նախադասություն են ստեղծում միասին : Սակայնչի բացառվում և հարաբերական բառի կիրառությունը առանց հարաբերյալի, և վերջինիս կիրառությունը ոչ թե հարաբերական բառի , այլ ստորադասական շաղկապի հետ . այս ձևով ստեղծվում են բազմաթիվ ստորադասական նախադասություններ:

Հարաբերական բառերով կապակցվող ստորաասական նախադասության բաղադրիչների բնորոշ կողմերից մեկն էլ այն է , որ նրանք գտնվում են ավելի սերտ մտային և քերականական կապի մեջ: Սա հետևանք էայն բանի , որ գերաաս նախադասության մեջ լինում է ձևական անդամ հարաբերյալ բառը, որը ազդարարում է երկրորդական նախադասության հաջորդելը, այնուհետև երկրորդական նախադասության կազմում հանդես եկող հարաբերական բառը ունի երկակի բնույթ, նա և կապում է բարդ ստորաասական նախաասության բաղադրիչները միմյանց, և նյութական բովանդակության շնորհիվ դառնում է երկրորական նախադասության անդամ:

Այսպիսով, հայերենի ստորադասական նախաասությունների մեջ մի առանձին որակ են կազմում հարաբերյալ ու հարաբերական բառերով կապակցվող բարդ ստորադասական նախադասությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մ.Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան , 1995:
2. Ս. Աբրահամյան,Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Երևան, 1962:
3. Վ.Առաքելյան , Հայերենի շարահյուսություն, հ.բ. , Երևան 1964:
4. Գ.Գարեգինյան , Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963:
5. Ռ.Հովհաննիսյան, Հին հայերենի ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների կառուցվածքը, Երևան, 1972:
6. Ն.Պառնայան, Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ Նախադասություններում, Երևան, 1961;
7. Բ.Վերդյան,Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն, Երևան, 1970:
8. Грамматика русского языка, из А.Н ССР т.II, ч. II, Москва, 1970: